

ՔՎԵՐԵԿՅԱՆ ԲԱՐԲԱՌԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Յուրաքանչյուր ժողովրդի ազգային դիմանկարը հանդիսացող լեզուն բաբելոնյան խառնակության մեջ կարող է դառնալ հույսի փարոս, հարթել և հղկել մարդկային միտքը, նվաճել երկրներ ու սրտեր: Այդպիսի քահակիր եղավ ֆրանսերենը, որով այսօր խոսում են ավելի քան վեց միլիոն ֆրանսալեզու կանադացիներ: Ֆրանսերենը Կանադայում հնչում էր դեռևս XVII դարից, երբ ժ. Կարտյեի արշավախմբի հետ Կանադա եկան առաջին բնակիչները: Դարեր շարունակ Ֆրանսիայի հետ կապող միակ օդակը եղել է լեզուն, որը պահպանվել է ամերիկյան մայրցամաքում քվեբեկցիների մեծ ջանքերի շնորհիվ: Նրանցից գերմադկային ճիգեր պահանջվեց՝ օտար իշխանության և օտար դավանանքի ճնշման ներքո լեզուն ու ազգային մշակույթը պահպանելու համար:

Կանադայում պատմության թելադրանքով Ֆրանսիայի կողմից լքված և դրա արդյունքում հիասթափություն ապրած ազգը, որը ձգտում էր «ազգային» գրականություն ստեղծել, սկսեց բարձրացնել ազգային լեզու ունենալու հարցը, որն անմիջապես կապված էր «ազգային» գրականության ստեղծման հետ:

Քվեբեկի նորեկուկ գրողները (Մեսպլե, Բիբո, Քենել, Լաթուա, Լակոմբ, Շովո, Բուշեվիլլ) ստեղծագործում էին բնականաբար իրենց մայրենի լեզվով՝ ֆրանսերենով՝ միևնույն ժամանակ ընդօրինակելով Մայր Ֆրանսիայի հայտնի գրողներին: Սակայն բուն կանադական լեզու չունենալու մասին ահա թե ինչպես էր արտահայտվում XIX դարի քվեբեկյան հայտնի պոետ Օկտավ Կրեմագին. «Այն, ինչ պակասում է մեր ժողովրդին, դա սեփական լեզու չունենալն է: Եթե մենք խոսեինք իրոքեզների կամ հուրոնների լեզվով, մեր խոսքը կգոյատևեր: Բայց դժբախտաբար, խոսելով նույնիսկ Բոսայուեի և Ռասինի լեզվով, մենք խոսում և գրում ենք խղճուկ ձևով: Մենք իզուր ենք ստեղծագործում այդ լեզվով, քանի որ միևնույն է մեր գրականությունը երբեք չի ճանաչվի որպես ազգային, այլ կմնա ընդամենը գաղութային»¹: Սակայն XIX դարի քվեբեկյան գրականությունը կարողացավ հաստատել ինչպես ֆրանս-կանադական ժողովրդի կապն իր ֆրանսիական արմատների հետ, նրա նվիրվածությունը «մայր լեզվին», այնպես էլ տարբերվելու լիակատար ազատություն և հնարա-

¹ Mailhot L., La littérature québécoise, Montréal, 1991, p. 14

վորոգումն ընձեռեց: Օկտավ «Կեանքի խոսքերից մեկ դար անց «Ժուալը» (journal) եկավ համապատասխանելու ինքնուրույն և ազգային լինելու ցանկությանը: Մոնտեսկյուն գործածվող ժուալը լեզվական մի նոր մակարդակ էր, ոչ թե նոր լեզու, նոր թարգման և ոչ էլ նույնիսկ արգել: Գրականության մեջ ժուալը նշանակեց է (langage), ռե, ձեռագիր և զարգափարախոսություն: Որոշ վիպասաններ շփոթեցին «Ժուալից»՝ որպես նկարագրության կոնկրետ մե:

Չունենալով սեփական՝ լեզու քվեբեկյան գրողները գտնվել են դարավոր լեզվական փնտրտուքների մեջ, հին հայրենիքի ֆրանսերենից մինչև ժամանակակից քվեբեկյան թարգման ընկած ճանապարհը նրանք անցել են «Ժուալի» միջոցով: Ժամանակակից քվեբեկյան թարգմանը ստեղծվել է մի շարք թաղկացուցիչ մասերից: Նորմանդական և բրետոնական ֆրանսերենից, տեղի ցեղերի թարգմաններից, ինչպես նաև հարևան անգլիացիների նորաբանություններից: Այսպիսով, հիմք ընդունելով իրենց մախմիների մայրենի լեզուն, քվեբեկցի հեղինակները նրան ազգային շունչ հաղորդեցին, և ֆրանսերենը դարձավ կանադական ֆրանսերեն իր գրական առանձնահատկություններով և լեզվական նրբություններով: Մակայն հասարակ ժողովուրդը պահպանեց իր լեզվի նոոմանդական և բրետոնական կոպտությունն ու պարզությունը:

Որքան էլ ֆրանսալեզու կանադական հեղինակները պայքարեցին քվեբեկյան ֆրանսերենն անեղծ պահելու համար, այնուամենայնիվ նրանց չհաջողվեց իրենց լեզուն լիովին գեոս պահել անգլիցիզմներից: Դեռևս XIX դարում քվեբեկյան ֆրանսերենի մոլի ջատագովը՝ Միշել Բիբոն, իր «Սատիրներից» մեկում ծաղրում է այդ անգլամոլությունը՝ կոչ անելով խոսել մաքուր ֆրանսերեն.

Շուրթերումն է պառճառը որ վառ ենք խոսում,
Որքան քոչ են նրանք, ովքեր ամենակարճ ճանն արտասանելիս անգամ
«արողանում են պահպանել բառերի իմաստը
Միշտ շաղկապելով դրանք մեկմեկու:
Պատեհորեն սկսել և ավարտել յուրաքանչյուր միջոց:
Շատ հաճախ ֆրանսերեն նախադասության մեջոնդում
Լինեք տեղադրում ենք անգլերեն դարձվածք:
"Presentment, indictment, impeachment, foreman,
Sheriff, writ, verdict, bill, roast-beef, warrant..."²

Ետբայություն գոյություն ունեն մի շարք քվեբեկյան արտահայտություններ, որոնք փոխառված և փոխակերված են ֆրանսերենից: Օրինակ՝ քվ. = un fret à faire hurler les loups, ֆր. = un froid de loup (սաստիկ ցուրտ): Կամ քվ. = travailler d'attache-poil, ֆր. = travailler d'attache-pied (քրտնաջան աշխատել):

Որոշ տիպիկ քվեբեկյան արտահայտությունների հիմքում էլ ֆրանսերեն արմատն է ընկած՝ Օրինակ՝ baisouiller (համբուրել, սիրել): pluie verglaçante

² Behaud M., «Œuvres, satires, chansons, épiques et autres pièces en vers» Montréal, 1982, p. 114

(անծրևից առաջացող մերկասառույց); y'é cherrant (նա թանկ է վաճառում); du mélangeaillage (խառնաշփոթ); y'é chaudasse (նա հարբած է); elle est pâlote (նա զուճատ է):

Ներկայիս Կանադայում շատ տարածված երևույթ է այսպես կոչված «ֆրանգլերենը» (franglais): Սա երկու դարավոր մրցակից լեզուների ժողովրդական խոսակցական սինթեզն է: Օրինակ՝ pas trustable (անվստահելի); ça swing en grand (դա լավ է աշխատում); être chicken (մոռացկոտ լինել); c'est too much (դա շատ շատ է); du bon stuff (լավորակ ապրանք); être out of this world (լավորակ ապրանք):

Ժամանակի ընթացքում կատարված այս լեզվական փոփոխություններն առաջին հերթին արտացոլվել են գեղարվեստական ստեղծագործություններում: Զվեբեկի ֆրանսախոս գրողներից մեծ ջանքեր պահանջվեցին ֆրանսիական ուսումնական հաստատությունները և ֆրանսերեն լեզուն պահպանելու համար: Մինչ օրս էլ Կանադայի ֆրանսախոսների և անգլախոսների միջև լեզվական լարվածություն է նկատվում: Ֆրանսիացիները զգում են սպառնացող ամերիկանիզմի վտանգը, այդ իսկ պատճառով անում են հնարավոր ամեն ինչ դրանից խուսափելու և իրենց լեզուն, ավանդույթներն ու մշակույթը պահպանելու համար համուն ազգային ինքնագիտակցման և ազգային ոգու դրսևորման: Այսօր Զվեբեկի միակ պաշտոնական և գրական լեզուն կանադական ֆրանսերենն է: Զվեբեկն ապացուցեց, որ այնտեղ միայն մեկ լեզվաբանական նորմ կա, միայն մեկ մեծամասնություն և մեկ հասարակություն՝ զուտ քվեբեկյան: Եվ լեզուն արդեն ոչ թե ֆրանսերեն է, այլ քվեբեկերեն՝ բավականին հեռացած ժամանակին մայրենի համարվող ֆրանսերենից: Օրինակ՝ il mouille (անծրև է գալիս), vesselle (սպասք), faire le barda (սենյակը հավաքել), trimper (աշխատել), s'renipper à neuf (զգեստապահարանը թարմացնել), capine (զխարկ), faire la palette (մեծ զուճար աշխատել), y'é sur le beau (նա շատ արագ է վարում մեքենան), char (մեքենա), y'é (նա է), pantoute (ամենևին), moé (ես):

Այսպիսով, «Զվեբեկյան» բառը մի ածական դարձավ, որը ցույց է տալիս մի ողջ ժողովրդի հերոսական պատմությունը, ժողովուրդ, որը պայքարել և արյան գնով է վաստակել այդ հողում ապրելու և քվեբեկցի կոչվելու իրավունքը: Յուրաքանչյուր բառ յուրօրինակ հայրենասիրական շունչ է ստանում «քվեբեկյան» ածականի հետ: Այսպես ֆրանսերենը դարձավ կանադական ֆրանսերեն, այնուհետև նույնիսկ քվեբեկյան բարբառ, որն իր մեջ է ամփոփել ֆրանսերեն լեզուն և կանադական ոգին: